«Շիրակացու ճեմարան»
միջազգային գիտակրթական համալիր

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ
2023-2024
Մայրենի (8-րդ դասարան)

Անուն Ազգանուն _____
Դպրոց _____
Դասարան _____ Խումբ _____

Արքայական խոսքը մեր կմնա հավետ...

1. Սիրելի՛ բարեկամ, ուշադի՛ր կարդա զրույցը:

Մի ժամանակ Հայաստանում մարդիկ առևտրով կամ արհեստով էին ավելի շատ զբաղվում: Հող մշակել չէին սիրում: Հաճախ արտերը անջրդի ու անմշակ էին մնում:

Թագավորը հրաման արձակեց, որ վարեն ու ցանեն դաշտերը, ցորեն աճեցնեն, որ ամեն ոք հաց ունենա, և սովը չավերի երկիրը:

Բայց շատերը չանսացին թագավորի կոչին. շարունակեցին առևտուր անել: Այդ ժամանակ նա իր մոտ կանչեց անվանի մի առևտրականի և մի իմաստուն շինականի, նրանց յոթ օր ժամանակ տվեց, որ իրեն ներկայանան ընտանիքներով:

- Ձեզ հետ կվերցնեք այն ամենը, ինչը ձեզ համար կարևոր և էական է, - ասաց արքան:

Յոթ օր անընդմեջ հարուստ վաճառականը ոսկուց և շողակներից զարդեր պատրաստել տվեց, կնոջն ու աղջիկներին զուգեց-զարդարեց ապարանջաններով, մանյակներով ու մատանիներով: Իսկ գեղջուկը աղաց ցորենը, կնոջը հրամայեց մեծ քանակությամբ լավաշ թխել, իսկ աղջիկներին՝ կարկանդակ ու գաթա:

Նշանակված օրը եկան թագավորի ծառաներն ու երկու ընտանիքներին առաջնորդեցին պալատի կողքին գտնվող երկու խրճիթ: Նրանց առանձին-առանձին փակեցին այդ քողտիկներում՝ թույլ տալով վերցնել իրենց յոթ օրվա պատրաստածը: Թագավորը արգելեց նաև ցանկացած փոխանակություն ընտանիքների միջև:

Երեկոյան՝ ընթրիքին, ամեն ընտանիքին միայն մեկական գավ ջուր տվին...

2. **Տեքստում գտի՛ր և դո՛ւրս գրիր բառակապակցություններին համապատասխանող բառերը** (3 միավոր):
   Լսել և ենթարկվել----------
   Թևի զարդ կամ թևնոց ----------
   Պարանոցի զարդ կամ վզնոց----------
   Երեկոյան ճաշ----------
   Երկարավիզ ու նեղբերան անոթ----------
   Հատուկ ձևով մշակված թանկարժեք քար—----------
3. **Տեքստում գտի՛ր և դո՛ւրս գրիր հոմանիշ բառերի զույգերը** (2 միավոր):

---

4. **Տեքստում գտի՛ր և դո՛ւրս գրիր տրված բառերի հականիշները** (2 միավոր):

Համբակ----------
Ջրարբի----------
Ապարանք----------
Հագուրդ----------

5. **Տեքստում գտի՛ր և դո՛ւրս գրիր *է, տալ, կա, շեն* արմատներով բառերը և վերլուծի՛ր բառակազմորեն: Այդ արմատներով մեկական բառ էլ դո՛ւ կազմիր** (4 միավոր):

---

6. **Տեքստում գտի՛ր և դո՛րս գրիր թվական բառերը, դրանցից մեկի արմատով կազմի՛ր հնարավորինս շատ բառեր, այնպես որ թվական չլինեն** (3 միավոր):

---

7. **Զրույցը վերնագրի՛ր, ապա շարունակի՛ր պատմությունը, հորինի՛ր ավարտ: Արտահայտի՛ր քո վերաբերմունքը այս զրույցի մասին** (6 միավոր):